ԳԼՈՒԽ Բ.

«ԱՆՁԵՒ ՔԱՕՍԻ» ՄԻՋԻՑ

Արտակարգ դժուար պարտականութիւն էր դնում պատմութիւնը Հայաստանի գործիչների վրա: Իսկապէս որ, «անձև քաօսի և աւերակների կոյտ էր» Հայաստանը այդ օրերին: Եւ սարսափելին այն էր, որ չկար ոչ մի հեռանկար: Թիւրքերը ծեծում էին արդէն Բագուի դռները: Գերմանացիք՝ յաղթական արևմուտքում: Ռուսաստանում քաղաքացիական կռիւն էր ծաւալում իր բոլոր արհաւիրքներով: Դրսից պաշտպանութիւն, ապրուստի միջոց, դրամական օժանդակութիւն չկար: Ինչ որ արւելու էր՝ պէտք էր անել սեփական ուժերով:

Հայաստանը, աւելի շուտ, դաղթականական կայան էր. ամբողջ երկրում շուրջ 450,000 դաղթական էր թափւած, որից մօտ 40,000ը՝ Երևանում, չատերը՝ փողոցների և աւերակ շէնքերի մէջ: Հաց չէր ճարւում, ժողովուրդն ապրում էր ինչով որ պատահեց: Գետնախնձորով կամ լոբիով խառն հացի ֆունտը քաղաքում, սկզբի օրերին, արժէր 5 ռուբլի և այն էլ ճարւում էր դժուարութեամբ:

Սարսափելի էր որբերի վիճակը: Երևանի «Զանգ» թերթը գրում էր օգոստ. 3–ին. «Տասնեակ հազարաւոր որբեր այսօր ցրւած Հայաստանի Հանրապետութեան սահմաններում, մոռացւած ամենքից՝ ենթակայ են ցրտի, քաղցի և համաճարակ հիւանդութիւնների... Մահացողներին վերջ չկայ. մեռնում են ամենքը և ամենուրեք, գիւղերում թէ քաղաքներում, բացօդեայ ամենքի աչքի առաջ»:

Հացի, ընակարանների, հագուստի և դեղերի պակասն ու դաղթականութեան խռնւածութիւնը առաջ բերին ու զարդացրին համաճարակ հիւանդութիւններ, սկզբում քոլերան, ապա բծաւոր տիֆը, որի դերանդին առատ հունձ էր անում ամէն կողմ: Տուն չկար, որ հիւանդ չունենար: Հիւանդները թափւած էին և՛ փողոցներում ու հրապարակներում: Միայն յունիս ամսի 12–18–ին Երևանի զինւորական հիւանդանոցը ընդունել էին 370 հիւանդներ, որից մեռել էր 142 հոգին, առողջացել 25: Օգոստ. 28–29–ին հիւանդանոցում կային 197 հիւանդներ, մեռան 17 հոգի: Զինւորական հիւանդանոցից դուրս, մասնաւոր բժիշկների տեղեկութիւններով օգոստ. 12—29–ին, Երևանում, մեռել էր 56 մարդ և հիւանդացել 157: Այս դեռ սկիզբն էր երկանց: Հապճեպով պատրաստւած հիւանդանոցներն անզօր էին իրական դարման հասցնելու. դեղ չկար, վառելիք չկար, սնունդ չկար, սպիտակեղէն չկար: Եւ մարդիկ մեռնում էին անմռունչ, հարիւրներով, հազարներով: Ժողովուրդը սպառւում էր վառւող մոմի պէս: